ՄԵՂԵԴԻ ԾՆՆԴՅԱՆ

Աչքն ծով ի ծով ծիծաղախիտ ծաւալանայր յառաւօտուն՝
Երկու փայլակնաձև արեգական նման.
Շողն ի ժմին իջեալ յառաւօտէ լոյս:
Վարսիցն երամից զարդ, երամից զարդ
Ոլորս են առեալ եռահիւսակն բոլորեալ այտիւք:
Յայտէն նռնենի գեղաշիտակ ծայրից ծաղկանց,
Որոյ սիւնն ի սրտին նուսխայօրէն կարկաջայր:
Ձեռացն եղիշոյ սարդիատունկ կամարակապ կապէր,
Ատիճաղ–պատիճաղ ստղի–խտղի երգով.
Հոսէր զելևելսն ընդ միմեանս.

Հանդարտիկ խաղայր, թիկնեթեկին ճեմէր:
Բերանն երկթերթի, վարդն ի շրթանց կաթէր,
Լեզուին շարժողին քաղցրերգանայր տաւիղն:
Ծոցն լուսափայլ կարմիր վարդով լցեալ:
Ծղիքն ծիրանի՝ մանուշակի հոյլք.
Խնկեալ ի կնդրկէ բուրուառ՝ հրով աստուածայնով լցեալ,
Ձայն քաղցրանուագ, որ ի նմանէ հնչէր:
Գեղեցիկ պատմուճանաւն զարդարեալ էր,
Ի կապուտոյ, ի ծիրանոյ, ի բեհեզոյ, ի յորդանէ.
Գօտին՝ արծաթափայլ, ոսկետտուն, կամարակապ յականց,
Յականց շափիւղայ մանրամասին յօրինուածով պճնեալ:
Անձինն ի շարժել մարգարտափայլ գեղով,
Ոտիցն ի գնալ՝ շողն ի կաթիլ առնոյր:
Այն Թագաւորին, այն նորածին Փրկչին,
Ձքեզ պսակողին՝ փառք յավիտեանս:Ամեն:

«ՄԵՂԵԴԻ ԾՆՆԴՅԱՆ» ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես բնությունը, այնպես էլ մարդը մեծ բանաստեղծի տաղերում արտացոլված է իր ողջ հմայքով ու կենդանությամբ: Նրա պատկերած Աստնածածինը կրում է երկնային լույսը, գեղեցկությունը և մաքրությունը, բայց հանդես է բերված իբրև իրական, չքնաղ ու հմայիչ կին:

Նարեկացին մանրամասն նկարագրում է այդ գեղեցիկ կնոջ արտաքինը և արդուզարդը: Եվ դա ոչ թե սառն ու անշունչ քանդակ է կամ սրբապատկեր, այլ կենդանի, շարժուն, թրթռուն արարած: Նրա ծով աչքերը ծիծաղախիտ ծովում ծավալվում էին այգաբացին՝ երկու փայլակնաձև արեգակի նման. շողն էր իջնում լույս առավոտվա ժամին: Ահա այդ պատկեր՝ Նարեկացու լեզվով.

Աչքըն ծով ի ծով ծիծաղախիտ ծաւալանայր յառաւօտուն՝
երկու փայլակնաձև արեգական նման.
շողն ի ժըմին իջեալ յառաւօտէ լոյս:

Չքնաղ կնոջ այտերը նռնենու ծաղիկներ էին, որոնցից, բուսահյութի նման կարկաչելով, սեր էր հոսում սրտի մեջ: Ողորկ ձեռքերը կանթում էր կոնքերին կամարաձև: Ոլորուն-գալարուն, ախորժալուր շրշյուններ արձակող քղանցքը ալիքվում էր՝ ծալքերն իրար վրա բերելով: Շարժվում էր հանդարտ, վայելչորեն ճեմում էր: Բերանը երկթերթ էր, վարդ էր շրթունքներից կաթում: Երբ շարժվում էր լեզուն՝ տավղի քաղցր հնչյուններ էր արձակում: Ծամերի բացվածքի մեջ հազրեվարդ կար: Սուրբ Հոգով լցված գինեգույն գեղեցկություն ունեին մազերը, որոնք փնջված էին զարդերով և այտերի շուրջը ոլորված էին երեք հյուսքերով: Ծոցը լուսափայլ էր, կարմիր վարդով լցված, դաստակները՝ ծիրանի, մանուշակի փունջ: Աստվածային հրով լցված բուրվառ էր նա՝ կնդրուկի, խունկի բույրեր արձակող: Քաղցրանվագ էր նրանից հնչող ձայնը: Զարդարված էր գեղեցիկ պատմուճանով, որ ոսկեշողում էր կապույտ, ծիրանի, բեհեզի, որդանի գույներով: Գոտին արծաթափայլ էր, ոսկեծայր, կամարաձև՝ շափյուղա քարերի մանրամասն դրվագմամբ շառագունած,

«Անձինն ի շարժել մարգարտափայլ գեղով,
ոտիցն ի գնալ՝ շողն ի կաթիլ առնոյր:

(Երբ շարժում էր մարմինը մարգարտափայլ գեղցկությամբ, երբ քայլում էր՝ լույս էր ոտքերից կաթում**):**

Այս պատկերը մեր քնարերգության ամենափայլուն գյուտերից է: Առհասարակ, այս տաղն ամբողջությամբ հայ և համաշխարհային քերթության աննախադեպ հրաշալիքներից է:

Տաղի վերջում թեև հեղինակը հիշեցնում է, որ խոսքը երկնային Թագավորին և աշխարհի Փրկչին ծնած Մարիամ Աստվածածնի մասին է, այդուհանդերձ, այս

ստեղծագործությունն ընկալվում է իբրև երկրային գեղեցիկ կնոջ գովերգություն: Դա միջնադարյան գրականության մեջ նշանակալից առաջընթաց էր դեպի մարդու գովերգը:

ԱՌԱՍՊԵԼ ԳԻՀՈՒ ՄԱՍԻՆ

Տասներորդ դարի հանճարեղ բանաստեղծ Գրիգոր Նարեկացու մասին շատ լեգենդներ կան հյուսված, որոնցից մեկում ասվում է, որ բանաստեղծը յոթը տարի հոտաղ է եղել Ձևիկ գյուղում: Ի տարբերություն մյուս հոտաղների՝ նա անասուններին երբեք չէր ծեծում: Տեսնելով նրա բարությունը՝ տերը՝ բիրտ ու անբարիշտ մի մարդ, ասաց.

Էլ ի՞նչ հոտաղ, որ անասուններին չծեծի: Մի տո՛ւր էստեղ ճիպոտը:

Եվ փորձելով խլել ճիպոտը՝ ընկնում է Նարեկացու հետևից: Եվ այդպես վազում էին նրանք իրար հետևից մինչև երեկո: Նարեկացին վախենում էր ոչ թե այդ բիրտ մարդու բռունցքներից, այլ չէր ուզում, որ մեծատունը ճիպոտը խլի, որովհետև այն խլելուց հետո անշուշտ պետք է ծեծեր անասուններին: Եվ այդ պահին կատարվում է հրաշք. Նարեկացին ձեռքի ճիպոտը խրում է հողի մեջ, և ինքն անհետանում: Տերը մնում է ափուբերան: Ուշքի գալով, հարուստը չարչարվում է, փորձում է ճիպոտը հանել հողից, բայց չի կարողանում, որովհետև այն անմիջապես արմատակալվում է, դառնում մշտականաչ ծառ՝ գիհի:

Ասում են, գիհու ծառի փայտը չի փտում, այն ապրում է չորս հարյուր տարի: Բայց, որքան էլ զարմանալի է, Ձևիկում Գրիգոր Նարեկացու տնկած գիհին ո՛չ փտում է, ո՛չ էլ չորանում: Նա անընդհատ կանաչ է: Գրիգոր Նարեկացու հրաշագործության շնորհիվ այն այժմ հազար տարեկան է: Եվ դեռ քանի՞ տարի էլ այն կապրի և դալար կմնա:

ՔԱՐԱԺԱՅՈՒՑ ԲԽԱԾ ՈՒ ՁՊԱԿԱՍՈՂ ՁՈՒՐ

Երկու վարդապետ ելնում գալիս են Նարեկացուն տեսնելու: Սուրբ Գրիգորը, հոգով իմանալով նրանց գալուստը, առավոտյան ելնում, ասում է միաբաններին. «Այսօր երկու վարդապետ է գալու այստեղ, դուք ասեք՝ Գրիգորը հաց է տարել հովվին»: Իսկ ինքը հովվական շորեր հագնում, գնում ոչխարներին հովիվ է դառնում: Երբ վարդապետները գալիս հարցնում են թէ՝ «Ո՞ւր է վարդապետը», միաբաններն ասում են. «Հաց է տարել հովվին»: Գնում-տեսնում են ոչխարների հովվին և հարցնում նրան, թե ուր է վարդապետը: Իսկ նա ասում է. «Ինձ հաց բերեց ու գնաց գութանի կողմը»: Նրանք հովվից ջուր են խնդրում: Ասում է. «Այստեղ ոչխարների մոտ մնացեք, ես գնամ ջուր բերեմ»: Գնում է ձորամիջում՝ մի քարաժայռ տեղ: Սուրբն այդ ժամանակ կանչում է Աստուծու անունը, գավազանը

խփում քարաժայռին և ջուր բխեցնում: Ամանը լցնում է և բերում վարդապետներին: Նրանք առնում խմում են, և սրբի աղոթքով ջուրը չի պակասում ամանից. դարձյալ լի ամանով վերադարձնում են հովվին: Հովիվն ասում է. «Դուք ծարավ չէիք. ինչո՞ւ ջուր խնդրեցիք և չխմեցիք»: Նրանք ասում են. «Շատ խմեցինք, բայց քո վարդապետի շնորհն էր ընկել ջրի մեջ, այդ պատճառով էլ չպակասեց»: Ապա ասում են. «Վե՛ր կաց գնանք, ցո՛ւյց տուր Նարեկացի վարդապետին»: Հովիվը ելնում է, խաչակնքում սարի վրա: Երկու գայլ է գալիս, ընկնում հովվի հոտի մեջ: Հովիվը ասում է . «Դուք ոչխարն արածեցրեք, ես գնամ Նարեկացի վարդապետին ցույց տամ»: Նա վերցնում է նրանց, գալիս գութանի մոտ, հարցնում մշակներին, թե ինչ եղավ վարդապետին: Նրանք ասում են. «Գնաց վանք»: ԵՎ նա ասում է. «Եկեք գնանք վանք, ձեզ ցուց տամ»: Վերցնում նրանց, մտնում է բակը և ասում. «Այստեղ մնացեք, ես գնամ ասեմ նրան, որ դուրս գա ձեզ մոտ»: Գնում է խուցը, հագնում վարդապետի զգեստը և դուրս գալիս, ողջունում վարդապետներին, տանում նրանց, նստեցնում: